Մեր կենսագրությունից, քաղաքական հետաքրքրությունից ելնելով՝ մենք միշտ կողմ ենք եղել համախիճված այլընտրանքների, դեմ ենք եղել «կարծ միացումների»: Ընդդիմությունը, հասարակությունը եւ պետությունը ընտրել են «կարծ միացումների» ճանապարհը: «Ժառանգությունը», իհարկե, շատ անգամ զոհաբերել է սեփական ինքնությունը հանուն ավելի համախիճված մոտեցումների: Նաեւ նախանձախիճի պիտի լինի, որ այն հասարակական զանգվածները, որ ընտրել են «Ժառանգությանը», իրենք էլ իրենք ներկայացվածությունը մեր միջոցով տեսնեն: Մյուս կողմից՝ կարող են կանխատեսել, որ «Ժառանգությունը», անգամ ի հաշիվ իր կուսակցության ինքնություն, կողմ կլինի մեծի, հույս ունեն՝ օրերից մի օր մեծ հաղթանակի»,- ասաց պարոն Հովհաննիսյանը:

Ճաղկաբաղն արված է փետրվարի 3-ի «Ազգ», «168 ժամ», «Հայք» թերթերից:

Առաջ՝ դեպի անցյալ. Ռուսաստանը, Թուրքիան եւ Հայաստանի կամքը

Ռազմավարական վերադասավորումների վերջին մրցավազմն արտացոլում է աշխարհակարգի իրական ճգնաժամը եւ իր մեջ պատմության կրկնություն լուրջ վտանգ է պարունակում: Դրա առունձով բավական է հիշատակել այն վարքը, որը դրսևորվել է գլոբալ եւ տարածաշրջանային գրեթե բոլոր դերակատարների կողմից, ովքեր հասցեատարեն փոխել են իրենց «արագությունը» եւ նախաձեռնել շահերի վերաբաշխում, ինչպես նաեւ այդ նպատակով ուղեգծային տարբերակների ու քաղաքական գործընկերության բազմազանացման մի ընդ որսարգուլու:

Գրեթե անկարելու է հանգամանքը, որ աշխարհաքաղաքական այս խառնձափորն անմիջականորեն ծնունդ է առել ռուս-վրացական «մեծ հորդանք» եւ դրանից անցնելով՝ Կովկասի ներկայիս բանաձեռնի փուլափոխ կամ էլ մրամից, որ ներկա իրարամոլուժն եզրագծում է միջազգային գերատեսչություններում քաղաքական ղեկավարները: Փաստն այն է, որ ռազմավարական պաշարների, հաղորդակցությունների եւ տարանցիկ ճանապարհների վերահսկողությունն ու տեսական հասկանալի ապահովման մեծ խաղը վերկայնել է մոր եռանդով, անձնատնտեսորն «պարտիզանություն» եւ երկրի խնդիրները:

Այս անխիճախ մոր աշխարհի ազդանշաններից մեկը Ռուսաստանի եւ Թուրքիայի փոխադարձ վերահայտնաբերումն է: Անկախ դրդապատճառներից եւ դրսևորումներից, Թուրքիայի՝ իր անդրատլանտյան հեննայան թիկունքում

մյուսված խաղը եւ Ռուսաստանի՝ իր «ռազմավարական դաշնակցի» զնով կառուցած հարաբերությունները մոտեցնում են ողբերգական պատմության վերադարձի ուրվակայանը եւ հիշեցնում ավելի քան 85 տարվա վարձմույթային այն օրերը, երբ չգոհանալով 1915-ի Ցեղասպանության ու Մեծ հայրենազոհման ժառանգությանը, բռնիեկական Ռուսաստանն ու Ազգայնական Թուրքիան Մոլոտով-Ռիբենտրոպի համազույց բաժան-բաժան արեցին հայկական հիմանքի բնօրրանը՝ բախտորոշ հարված հասցնելով նրա ապագային:

Լեռնային Ղարաբաղը կամ Արցախը, ինչպես այն կոչվում է հայերեն, 1921թ. այս երկու պարիսրների դավադիր ծրագրի տարածքային զոհերից էր: Նախկինում ինքնուրուպ սին նա դրվել էր խորհրդային Արրբեշանի ավատիչականության ներքո: Հայոց պատմական հայրենիքի նահանգ հանդիսացող Նախիջեանը հաջորդաբար մաքրվեց իր էթնիկ մեծամասնությունից եւ անգամ իր հայկական մշակութային ժառանգությունից: Սրա ամենաթարմ ապացույցը են անդամ Արրբեշանի Համրապետության կողմից 2005թ. դեկտեմբերին Ջուլդայի միջնադարյան գերեզմանոցի եւ հազարավոր հայկական խաչքարերի թալիբավայել անբողջական ոչնչացումն է:

Լեռնային Ղարաբաղը կարողացավ բացառության կարգով ցեղասպանություն, հայրենակցական, բռնազավթման եւ բաժանման անցյալի կտակած հանգամանքները շուր

տալ հակառակ ուղղությամբ, արտաքին ազդեցիկայից պաշտպանեց իր ինքնությունը, ամբողջականությունը ու տարածքը եւ 1991-ին հայտարարեց իր ազատությունը, ապագադրաբացումն ու ինքնիշխանությունը՝ Կոստոյի, Հարավային Օսիայի, Աբխազիայի հարցերն արդիական դառնալուց շատ առաջ, միջազգային պայմանագրային իրավունքի Մոնտեվիդեոյի չափանիշներին, ինչպես նաեւ խորհրդային Միության այդ ժամանակվա պատկան օրենսդրությանը համապատասխան:

Կոստոյի, ապաեւ Հարավային Օսիայի ու Աբխազիայի ճանաչման միջազգային փորձը ցույց տվեց, որ այս աշխարհում չկա օրենքի իսկական գերակայություն, որը հավասարապես տարածված է բոլոր տարբերակների վրա, այլ գոյություն ունի կենսական շահերի գերակայությունը, որը հարմար ձեւով բողարկվում է կամայականորեն մեկնաբանված միջազգային իրավունքի սկզբունքների շղարշի ներքո, ինչպես ոչ մի տարբերություն չառաքացունը՝ իրենց ցանկալի փաստերի ընտրովի տարբերակման փորձերի տակ:

Եկել է Ֆարսին դիմապայելու ժամանակը: Սա վերաբերում է նաեւ Մոսկվայի եւ Անկարային: Սակայն իրենց բարձրաստիճան պաշտոնյաների ներկայիս հայտարարություններից ակնբախորեն երևում է, որ

Առաջ՝ դեպի անցյալ. Ռուսաստանը, Թուրքիան և Հայաստանի կամքը

ՍԿԻՔՔՔՔ էջ 9

ճանաչում էր հասկանում կամ չէր հասկանում: Եվ եթե Ռուսաստանն ու Թուրքիան չարժեքներ են նոր ռազմավարական համաձայնության կարիքից դրդված, ապա այդ պարագայում միջազգային բառերաբեմի իրենց գործընկերներն առնվազն պետք է վերափոխեն իրենց «արագությունը» և, համապատասխանաբար, հաշվարկեն վարած քաղաքականության այլընտրանքները: Այստեղ է, որ Իրանը, ՄԱԿ-ը և վերջինիս եվրոպացի դաշնակիցները կարող են գտնել իրենց մտահոգությունների առարկայական իաջնությունը:



բազմաթիվ բաժանարար խնդիրների, որոնք բաժանում են երկու հարեմանների, ո/ հետպատերազմյան Գերմանիայի գերազանց օրինակով ընդունի երկուսից 20-րդ դարի առաջին Ցեղասպանության երկուսից ուղեկցած լեզգային հայրենազրկյալ համար, ե/ խոստանա վերակառուցել, բարենորոգել, ապաև տոնել հայկական ազգային ժառանգությունը՝ Արարատ լեռից և միջնադարյան մայրաքաղաք Անիից մինչև Եկեղեցիների, վանքերի, դպրոցների, կաճառների, ամրոցների ու հայրենի բնօրրանի մշակութային այլ գաղձեքի համաստեղությունը, գ/ նախաձեռնի ե իրականացնի այլ հայրենազրկյալների ժառանգների ու սերունդների՝ իրենց նախնիների բնակատեղիները:

Ռուսաստանը և Թուրքիան այնքան երբեք չպետք է նպատակի միասնություն որոնեն Հայաստանի ե հայ ժողովրդի հաշվին: Ցեղասպանությունների, քաղաքների, մահվան ճամբարների և «գոլպագ»-ների փորձը լիովին բավարար է ողջ պատմության համար:

Որպես իրական է հնարավոր գործընկերներ՝ կարելի էր այս երկու երկրները պետք է հարգեն այլ ազգի ռոբերտական պատմությունը, նրա ինքնիշխան ամբողջականությունը և տարածաշրջանային արդի դերակատարությունը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի՝ օրինակալորեն ձեռք բերած ազատությունն ու անկախությունը:

Ֆուտուրային դիվանագիտությունը լավ է, սակայն Թուրքիան կարող է գլոբալ առաջատարության և տեղական լեգիտիմության ցանկնայի կարգավիճակը ստանձնել լույս այն պարագայում, եթե այդ երկիրը ա/ Հայաստանի հետ հարաբերակցի բարեխղճության «պատճիռով» և ճշմարտության միջոցով հաշտեցնամք, բ/ վերացնի Համապետության հանդեպ կիրառած ապօրինի շրջափակումը և սահմանը որպես սակարկության լծակ օգտագործելու փորձարեն բացի այն, որը միակողմանորեն փակել էր, գ/ դիվանագիտական հարաբերություններ հաստատի առանց որևէ նախապայմանների և այդ հարաբերությունը օգտագործելով՝ կառուցի երկկողմ վստահություն և լուծում տա

ներ ու կալվածքներ կամավոր վերադարձի իրավունքը երաշխավորող համապարփակ ծրագիր, է/ իր հայկական համայնության տա քաղաքացիական, մարդկային և կրոնական լիարժեք իրավունքներ և Քրեական օրենսգրքից հանել չարաբաստիկ 301-րդ հոդվածը, որը բավականին երկար ժամանակ ծառայել է որպես սահմանափակ, բռնաճնշման ե, նույնիսկ, մահվան գործիք այն բացարձակ և ազնիվ քաղաքացիները դեմ, ովքեր համարձակվում էին բարձրաձայնեցնել ցեղասպանության պատմական փաստը, և վերջապես՝ ը/ ավելի մեծ շրջափակումներ ցուցաբերի Պավլի և Գոլյաթի օրինակով կյանքի ու արդարության համար Լեռնային Ղարաբաղի ժողովրդի մղած պայքարի համատեղատուն «Օկուպացիայի» անհեթեթ և անհիմն պնդումների շուրջ արտահայտվելիս, այդպես մեկ ուրիշ տիպաված կլինի նրան հիշեցնել այդ եզրաքառության առաջավոր

պատշաճ ու տեղին կիրառման նախադեպերի մասին:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա ճշմարիտ ռազմավարական դաշնակիցները, որպես կանոն, անկեղծորեն խորհրդակցում են միմյանց հետ և համակարգում իրենց քաղաքականությունը՝ ելնելով ընդհանուր շահերից: Նրանք իրար հետ երբեք չեն խոսում անբարենպաստ արձանագրումների շուրջ երրորդ կողմերի հետ թիկունքային բանակցությունների միջոցով, հանրության առջե կամ առանձին միմյանց դեմ չեն դիրքավորվում և չեն փորձում իրար վախեցնել կամ իրար վրա ճնշում գործադրել աշխարհի մասնակի ակունքների ու թերթերի միջոցով: Ռուսաստանը նույնպես պետք է Հայաստանին վերաբերվի բարի կամքով: Նա պետք է ճանաչի Հայաստանի ազգային ինքնիշխանության ամբողջ խորքը և տարածությունը, հետխորհրդային հատուկապես փոխհարաբերության իրողորդական բնույթը, Հայաստանի՝ հավասարակշռված, բովանդակալից և ինտեգրալ արտաքին քաղաքականությունը որոնելու և վարելու իրավունքը, ինչպես նաև գիտակցի Լեռնային Ղարաբաղի ազատության, անվտանգության և ինքնորոշման իրավունքը ոչ մի դեպքում՝ անգամ արդեցանական ճամփի ձեռքբերման ու վերահսկման հենքին, առևտրի առարկա չդարձնելու հրամայականը:

Պաշտոնական երեսանի իր հեթոքները և շրջանավարտ դաժան՝ իրականացնելու համար իրեն բաժին հասած պատասխանատվությունը՝ ի նպաստ տարածաշրջանում խաղաղության ու համատեղ անվտանգության, փոխադարձ հարգանքի ու բաց սահմանների, ներքին ժողովրդավարության և միջազգային համագործակցության: Որպես ինքնավար քաղաքակրթություն ունեցող նոր պետություն՝ Հայաստանը արդի դարաշրջանում իր ազգային շահերին կարող է լավագույն ծառայել կարճ ժամանակահատվածում դարձնելով այնպիսի հանրապետություն, որը կղեկավարվի օրենքի համընդհանուր գերակայությամբ ու իրավունքի իշխանությամբ, մարդու ինձնարար ազատությունների հանդեպ մտապահ հարգանքով, արդար կառավարմամբ և իրական ընտրություններով: Այս ասանքը, ցավոք, տակալին իրականություն չի դարձնել:

Հայաստանի հարկավոր է ճշմարիտ ուղին՝ ե՛լ՝ անհավաղ, բայց պատմությունը վկա՝ նա այնքան երբեք չի կարող ե չպետք է ընդունի հիմարի տեղը: Կան է՝ առավել ես գոհի:

ՌԱՖՖԻ 4. ԳՈՒՅԱՆՆԻՍԱՆ

Ռաֆֆի Հովհաննիսյանի գործունեությունը միջխորհրդարանական կառույցների ձեռնաչափում. ուշագրավ մանրամասներ

Սեպտեմբերի 12-19-ը Ռաֆֆի Հովհաննիսյանն այցելեց Լիբանան, հանդիպումներ ունեցավ խորհրդարանականներին, օտարերկրյա դեսպաններին և հայ համայնքի ներկայացուցիչներին հետ:

Սեպտեմբերի 26-27-ին, Ֆրանսիայի Թալուար քաղաքում Համաշխարհային Լիբերալիստ սեմինարին (Global Leaders Seminar), որը «Քաղաքական կայունությունը Կովկասում և Կենտրոնական Ասիայում» բեմայով կազմակերպում է Միջազգային իրավունքի և դիվանագիտության Ֆլետչերի ինստիտուտը՝ Եվեյցարիայի, Քեյֆայի, Սինգապուրի և Կորեայի միջազգային հարաբերությունների համաձայն ինստիտուտների և դիվանագիտական ակադեմիաների հետ համատեղ, Ռաֆֆի Հովհաննիսյանը ելույթ ունեցավ տարածաշրջանային վերլուծության և հանդիպում ունեցավ Ֆլետչերի Իրավունքի և դիվանագիտության դպրոցի (Fletcher School of Law and Diplomacy) դեկան Steven Bosworth-ի հետ:

Սեպտեմբերի 28-ին մասնակցեց Եսիվ Գաուտշոյանին: Այնտեղ, չմասնակցելով լիազումար Ռիստին՝ Եվրոպական ժողովրդական կուսակցության խմբում ելույթ ունեցավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական հիմքերի վերաբերյալ, ե թե ինչպես Կոստովն չի կարող միայն ինքնառիպ լինել: Մշակույթի, գիտության և կրթության հանձնաժողովում պարոն Հովհաննիսյանն արժարժեց մշակութային ժառանգության և մասնավորապես՝ Թուրքիայի, Վրաստանի և հատկապես Ջուրջայի խնդիրները: Նա նշեց, որ սա ոչ թե իր հարցն է, այլ Եվրասիո-հուրդը ինքն պետք է որոշի, թե որքանով է ընդունելի անդամ պետության կողմից իր անդամության տարիներին մշակութային ժառանգության ոչնչացումը, այդ թվում՝ պաշտոնական պատվիրակության այցի խափանումը և այլն (այս առիթով Ռաֆֆի Հովհաննիսյանը նախապես դիմել էր «Ժառանգություն» կուսակցության վարչության նախագահ Անահիտ Բախչյանին և Աժ «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Արմեն Մարտիրոսյանին: Նամակում ասված է. «Առանց ՀՀ ներքազգային ուր իրադարձությունների անձապատկարարման է մտնում լիազումար միտերին իմ ներկայությունը, բայց ե այնպես անհրաժեշտ եմ համարում մեր անդամակցած EPP խմբի, ինչպես նաև մեր նախաձեռնած Հայոց մշակութային ժառանգության խնդիրների վերաբերյալ պատկան համեմատողական քննարկումներին իմ մասնակցությունը միջոցով մեր ստանձնած պատասխանատվության շարունակական իրագործումը»: Նա նաև ելույթ ունեցավ իրավական, մշակութային, ինչպես մարդու իրավունքների հարցերի, Վրաստան-Ռուսաստան հակամարտության շուրջ:

Ռաֆֆի Հովհաննիսյանն անդամակցում է Կանոնակարգի, ինտերնետների և ընթացակարգերի համեմատողական, որի միտումն է համազգայնացնելու շահի բախումը կամրելու մատակարար, առաջարկ ներկայացրեց ընդլայնել conflict of interest-ի սահմանումը և այնպես անել, որ յուրաքանչյուր համազգայնացող՝ հասկանալի Սոնթրոփից համեմատողական, ինքն փաստի, որ չունի շահի բախում (ե ոչ միայն ՀՀ-ն, այլև արևմտյան, այլև ընտանեկան կամ այլ տեսակի) այն երկրի մկամամբ, որի մոնիթորինգն ինքն է իրականացնում, և այլ բնույթի պատվիրակ Փոքեր Աջի հետ բանաձեռնի մի նախագիծ հեղինակեց այդ հարցի վերաբերյալ:

Ռաֆֆի Հովհաննիսյանը ելույթներով հանդես եկավ ես 4 համեմատողական՝ չմասնակցելով լիազումարին Ռիստին: Ի նշան, Ռե Պուլսը ամառը Հայաստան կատարած իր այցի ընթացքում Ռաֆֆի Հովհաննիսյանի հետ առանձնազրուցական խմբում էր, որ վերջինս վերադառնա Եսիվ՝ բարձր գնահատելով նրա ելույթները՝ «որպես շատ բանական ելույթներ»: Հովհաննիսյանն ասել էր, որ լիազումար միտներ

նույնպես, հավասար չափանիշների և այլ արժեքների նկատմամբ:

Հոկտեմբերի 28-31-ը Կապե Վերդիի Պրայա քաղաքում մասնակցեց Եվրոպայի խորհրդի մշակույթի, գիտության և կրթության հանձնաժողովի հատուկ նիստին, որն անդրադարձել է միջմշակութային երկխոսությանը, կոնֆլիկտային իրավիճակներում մշակույթի ու պատմության ուսուցանող և սփյուռքի դերին: Այնտեղ հանդիպեց Կապե Վերդիի հանրապետության խորհրդարանի նախագահ Արիստիդես Ռայմունդո Լիմայի հետ: Զետաբըրյան կամ է, որ բոլոր մասնակցները, այդ թվում՝ խորհրդարանի խոսնակը, առում էին, որ առաջին անգամ է Հայաստանից որևէ մեկն այցելում Կապե Վերդի: Համեմատելով Կապե Վերդիի և հայկական սփյուռքների, Ռաֆֆի Հովհաննիսյանը շատ մի շարք օգուղապետներ անցկացրեց՝ մասնավորապես նկատելով, որ այդ երկրի սփյուռքը ես թվաքանակով գերազանցում է հայրենիքի բնակչությանը, սակայն Կապե Վերդիի սփյուռքը, ի տարբերություն Հայաստանի, ձեռնարկել է ոչ թե ցեղասպանության կամ որևէ այլ ողբերգության արդյունքում, այլ տնտեսական արմատներ ունի: Այս առումով այն ավելի մոտ է մեր նոր սփյուռքին:

Նոյեմբերի 5-8-ը Փարիզում, որպես Եսիվ Կապե Վերդիի պատվիրակության անդամ, մասնակցեց Եվրոպա-Իսրայել-Միջին Արևելք հարաբերություններն արժարժող գիտաքաղաքական համաժողովին, որը կազմակերպել էր «Իսրայելի Եվրոպական ընկերները» կազմակերպությունը, հանդիպումներ ունեցավ Եսիվ Կապե Վերդիի հետ: Իսրայելի Քենեթի խոսնակ Դալիա Իթզիզի և Գերմանիայի Ղաշնայանի Բուրնեթսբազի փոխնախագահ Պետեր Պալի հետ:

Նոյեմբերի 24-29-ը Բուրնեթսբազի հրավերով Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրների պատվիրակության կազմում մասնակցեց «Ժողովրդավարության գործընթացի կայացումը» ծրագրին: Մասնակցում էին նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը, իսկ Պավլի Հարությունյանի փոխարեն՝ Ջարուհի Փոստապետյանը: Սա բարձրաստիճան այցելումների ծրագիր էր, որտեղ Բուրնեթսբազի տարբեր խմբակցությունների և մի շարք կառույցների ղեկավարների հետ մեծարկել են ներքին և արտաքին քաղաքականության ամենվզող հարցեր:

Նոյեմբերի 8-9-ը Փարիզում մասնակցեց Եսիվ Կապե Վերդիի և կրթության հանձնաժողովի նիստին, որտեղ նաև քննարկեց ոչնչացվող պատմական ժառանգության փոխադարձ անհրաժեշտությունը: Թե միտի ընթացքում և թե Իրվանի և Իրվանոսար կազմակերպությունների ղեկավարների հետ մասնավոր գրույցներում Ռաֆֆի Հովհաննիսյանը վերադարձնեց Ջուրջայի խաչքարերի հարցը:



րին չի մասնակցի, մինչև Հայաստանը և Եվրասիո-հուրդը չապահովեն անհրաժեշտ չեմք՝ յուրաքանչյուր իր չափում ներում: Հիշեցնենք, որ Ռաֆֆի Հովհաննիսյանը Եսիվ լիազումար միտի իր հայտնի ելույթի վերջում ասել էր, որ Հայաստանը և Եվրասիո-հուրդը պետք է արժանի լինեն միմյանց: Այժմ նա եվրոպացի պաշտոնյաներին բաց տեքստով անկարող էր, որ միզուկն ինքն փակվում էր, քանզի թե ՀՀ իշխանությունները, թե Ես պատասխանատուները նույն քանակարգում ու կամայականությունն ունեն օրենքի իշխա-

2008թ. «Ժառանգություն» խմբակցության պատգամավորների հանդիպումների եւ այցելությունների օրացույց

2008թ. հոկտեմբեր

- 02.10.2008թ.** Զ.Փոստանջյանը մասնակցեց 33 կառավարության նիստին:
- 03.10.2008թ.** Ա.Սաֆարյանը հյուրընկալվեց «Ուրբաթ» ակումբում՝ խոսելով եւսևՎ մոնիթորինգի համեմատողովի վերջին հայտարարության եւ Ազգային ժողովում 33 նախագահի ուղերձի մասին:
- 03.10.2008թ.** Լ.Ավալերյանը հյուրընկալվեց «Դե Ֆակտո» ակումբում՝ խոսելով եւսևՎ մոնիթորինգի համեմատողովի վերջին հայտարարության եւ Ազգային ժողովում 33 նախագահի ուղերձի մասին:
- 03.10.2008թ.** Ա.Մարտիրոսյանը «Մարիոթ» հյուրանոցում մասնակցեց «Ընդդեմ իրավական կամայականության» 34-ի եւ «Համագործակցություն հանուն բաց հասարակության» մականունով կազմակերպված՝ «Աշխատանքային իրավունքների պաշտպանության անջնջ խնդիրները» թեմայով քննարկումների:
- 03.10.2008թ.** Ա.Մարտիրոսյանը այցելեց Վարդաշեն քրեակատարողական հիմնարկ:
- 04.10.2008թ.** «Մարտիրոսյանական շաբաթ» ամենշաբաթյա հեռուստահաղորդման ընթացքում 3 ռուպեանոց ելույթով հանդես եկավ Լ.Ավալերյանը:
- 06.10.2008թ.** Ա.Սաֆարյանը հանդիպեց Կահիրեի Ամերիկյան համալսարանի քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր, Կահիրեում Հարավսլավիայի նախկին դեսպան Իվան Իվեկովիչի հետ:
- 06.10.2008թ.** Ա.Մարտիրոսյանը եւ Ա.Սաֆարյանը մասնակցեցին Գերմանիայի կառավարության արտաքին գործերի նախարարության Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի բաժանմունքի ղեկավար Յոհանես Լեզենբրեխտի այցի կազմակերպմանը 33-ում Գերմանիայի դեսպան Անդրեաս Վիկտորինի կազմակերպած ընդունելությունը:
- 08.10.2008թ.** Ա.Բախչյանը մասնակցեց 33 կառավարության նիստին:
- 10.10.2008թ.** Ա.Սաֆարյանը մասնակցեց Մարդկային զարգացման կենտրոնում (ՄԶԿ) «Սցենարային պլանավորում» (Նարքարի հակամարտության օրինակով) թեմայով Հակամարտությունների կառավարման խմբի ղեկավար Արթուր Մարտիրոսյանի վարած դասընթացին:
- 12.10.2008թ.** «Մարտիրոսյանական շաբաթ» ամենշաբաթյա հեռուստահաղորդման ընթացքում 3 ռուպեանոց ելույթով հանդես եկավ Ա.Մարտիրոսյանը:
- 12.10.2008թ.** Ա.Սաֆարյանը հարցազրույց տվեց «ԱՐ» հեռուստաընկերությանը՝ խոսելով խմելու ջրի հիմնական ճանապարհների շուրջ:
- 16.10.2008թ.** Լ.Ավալերյանը մասնակցեց 33 կառավարության նիստին:
- 18.10.2008թ.** «Մարտիրոսյանական շաբաթ» ամենշաբաթյա հեռուստահաղորդման ընթացքում 3 ռուպեանոց ելույթով հանդես եկավ Ա.Բախչյանը:
- 20.10.2008թ.** Ա.Բախչյանը մասնակցեց 33 կառավարության նիստին:
- 21.10.2008թ.** Ա.Սաֆարյանը մասնակցեց փոխծովակալ, ԱՄՆ-ի երկրակազմի հրամանատարության փոխհրամանատար Ռիչարդ Փայլսիերի եւ Ազգային անվտանգության բիզնես կառավարիչների պատվին 33-ում Ամերիկայի դեսպան Մարի Յովանովիչի կազմակերպած ճաշկերույթին:
- 24.10.2008թ.** Ա.Սաֆարյանը մասնակցեց «Քաղաքական մշակույթի ծեսավորումը եւ կայացումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Մամուլի ազգային ակումբի եւ ԱՄՆ Ազգային ժողովրդավարական ինստիտուտի հետ համատեղ կազմակերպված՝ «Հայ-թուրքական հարաբերությունների ներկան եւ հեռանկարը» թեմայով քննարկումների:
- 25.10.2008թ.** «Մարտիրոսյանական շաբաթ» ամենշաբաթյա հեռուստահաղորդման ընթացքում 3 ռուպեանոց ելույթով հանդես եկավ Ա.Բախչյանը:
- 25.10.2008թ.** Ա.Բախչյանը հյուրընկալվեց «Դե Ֆակտո» ակումբում՝ խոսելով 1999թ. հոկտեմբերի 27-ի իրադարձությունների շուրջ:
- 30.10.2008թ.** Ա.Բախչյանը Կրթության ազգային ինստիտուտում դասընկերների համար կազմակերպված դասընթացին դասախոսություն կարդաց «Աշակերտակներում դպրոց. Աշակերտական ինքնավարություն եւ ինքնակառավարում» թեմայով:
- 31.10.2008թ.** Ա.Բախչյանը մասնակցեց 33 կառավարության նիստին:

2008թ. նոյեմբեր

- 01.11.2008թ.** «Մարտիրոսյանական շաբաթ» ամենշաբաթյա հեռուստահաղորդման ընթացքում 3 ռուպեանոց ելույթով հանդես եկավ Ա.Մարտիրոսյանը:
- 08.11.2008թ.** «Մարտիրոսյանական շաբաթ» ամենշաբաթյա հեռուստահաղորդման ընթացքում 3 ռուպեանոց ելույթով հանդես եկավ Վ.Խաչատրյանը:

- 12.11.2008թ.** Ամ Նախագահի Հովիվ Արախանյանի հրավերով Ա.Սաֆարյանը մասնակցեց Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատի նախագահ Մարիոս Գալուսի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցի կազմակերպմանը «Հին Երիվան» ռեստորանում կազմակերպված պաշտոնական ընթրիքին:
- 12.11.2008թ.** Ա.Սաֆարյանը հյուրընկալվեց «Շամբ» հեռուստաընկերության «Հորիզոն» հաղորդաշարին:
- 12.11.2008թ.** Ա.Սաֆարյանը «Ժառանգություն» խմբակցությունում հանդիպեց Վրաստանում Բրիտանական դեսպանատան ներկայացուցիչ, Հարավային Կովկասում տարածաշրջանային հակամարտությունների գծով խորհրդակցական Քեյթ Ուայթի հետ:
- 15.11.2008թ.** «Մարտիրոսյանական շաբաթ» ամենշաբաթյա հեռուստահաղորդման ընթացքում 3 ռուպեանոց ելույթով հանդես եկավ Զ.Փոստանջյանը:
- 17.11.2008թ.** Ա.Սաֆարյանը մասնակցեց «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության «Եռանդ կետ» հաղորդաշարին՝



- պատգամավորներ Գագիկ Մինասյանի եւ Գոհար Ենոքյանի հետ բանվիճելով 2009 թվականի բյուջեի նախագծի շուրջ:
- 17.11.2008թ.** Ա.Սաֆարյանը եւ Լ.Ավալերյանը մասնակցեցին «ՂԴՂ՝ երկրների ինստիտուտ»-ի հայաստանյան մասնաճյուղի՝ Մոսկվայի տանը կազմակերպած «Անդրկովկաս. նոր իրավամտություն, խնդիրներ եւ տարածական ընկալումներ» թեմայով սեմինարին:
- 20.11.2008թ.** Ա.Բախչյանը մասնակցեց «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության «Եռանդ կետ» հաղորդաշարին՝ խոսելով 2009 թվականի բյուջեի նախագծի շուրջ:
- 20.11.2008թ.** Ա.Բախչյանը մասնակցեց Մարզահամերգային համալիրում Հանրապետության նախագահի եւ 33 քաղաքական ուժերի հետ կազմակերպված խորհրդակցությանը:
- 24.11.2008թ.** Ա.Բախչյանը մասնակցեց Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպված՝ կին քաղաքական գործիչների եւ լրագրողների համընկած, որտեղ մասնակորպեսները քննարկեցին կին քաղաքական գործիչների գործունեության լուսաբանման անջնջ խնդիրները:
- 23.11.2008թ.** «Մարտիրոսյանական շաբաթ» ամենշաբաթյա հեռուստահաղորդման ընթացքում 3 ռուպեանոց ելույթով հանդես եկավ Ա.Սաֆարյանը:
- 25.11.2008թ.** Ա.Բախչյանը հյուրընկալվեց «Ուրբաթ» ակումբում՝ խոսելով արտաքին հարաբերությունների հիմնահարցերի եւ Եվրոխորհրդի մարդու իրավունքների համեմակատար Թոմաս Համմերբերգի հայտարարության շուրջ:
- 27.11.2008թ.** Ա.Բախչյանը մասնակցեց «Շողակաթ» հեռուստաընկերության «Երրորդ հազարամյակ» հաղորդաշարին:
- 27.11.2008թ.** Ա.Բախչյանը մասնակցեց 33 կառավարության նիստին:
- 29.11.2008թ.** «Մարտիրոսյանական շաբաթ» ամենշաբաթյա հեռուստահաղորդման ընթացքում 3 ռուպեանոց ելույթով հանդես եկավ Ա.Մարտիրոսյանը:

2008թ. դեկտեմբեր

- 01.12.2008թ.** 33-ում Ռուսիայի դեսպան Քրիստա Պրուսկինի հրավերով Ստոյպա Սաֆարյանը մասնակցեց Ռուսիայի ազգային տոնի կազմակերպմանը կազմակերպված միջոցառումներին:
- 04.12.2008թ.** Ա.Սաֆարյանը «Կոնգրես» հյուրանոցում հանդիպեց Ավստրիայի Հետոլմախի ինստիտուտի գիտաշխատող Քրիստոֆ Բենեդիկտերի եւ 1918-2008 Հանրապետություն կազմակերպության համակարգման բյուրոյի

- աշխատակից Պիտեր Ֆրիցի հետ:
- 05.12.2008թ.** Ա.Բախչյանը Ծաղկածորում մասնակցեց «Կանայք եւ տեղական ինքնակառավարում» թեմայով սեմինարին՝ կարդալով «Կանայք որոշումների ընդունման մակարդակում» թեմայով ելույթ:
- 06.12.2008թ.** «Մարտիրոսյանական շաբաթ» ամենշաբաթյա հեռուստահաղորդման ընթացքում 3 ռուպեանոց ելույթով հանդես եկավ Լ.Ավալերյանը:
- 10.12.2008թ.** Ա.Բախչյանը եւ Ա.Սաֆարյանը Հայաստանում Եվրոխորհրդի գլխավոր քարտուղարության հատուկ ներկայացուցիչ տիկին Սիլվիա Մարիա Ջենեի հրավերով մասնակցեցին Սուրբ Ծննդյան տոների առիթով կազմակերպված ընդունելությանը:
- 12.12.2008թ.** «Մարտիրոսյանական շաբաթ» ամենշաբաթյա հեռուստահաղորդման ընթացքում 3 ռուպեանոց ելույթով հանդես եկավ Ա.Բախչյանը:
- 12.12.2008թ.** Ա.Բախչյանը, Ա.Մարտիրոսյանը, Ա.Սաֆարյանը եւ Լ.Ավալերյանը «Կոնգրես» հյուրանոցում մասնակցեցին «Բաց հասարակության ինստիտուտ» 34-ի կազմակերպած՝ «Ամ քաղաքական ուժերի օրենսդրական գործունեության մոնիթորինգ» զրոյակում գեներալական դիտարկման արդյունքների քննարկմանը:
- 15.12.2008թ.** Ա.Բախչյանը, Ա.Մարտիրոսյանը եւ Ա.Սաֆարյանը «Եվրոպա» համագործակցության հիմնարկի հրավերով «Կոնգրես» հյուրանոցում մասնակցեցին «Եվրոպա» համագործակցության հիմնադրամի հակակոռուպցիոն երկամյա ծրագրի արդյունքների ամփոփմանը նվիրված խորհրդակցությանը, որի ընթացքում ներկայացվեց կոռուպցիայի դեմ պայքարում պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների եւ լրատվամիջոցների դերը:

2009թ. հունվար

- 09.01.2009թ.** Ա.Բախչյանը հանդիպում ունեցավ 33 Կրթ. եւ գիտության նախարարության «Լույս» հիմնադրամում:
- 12.01.2009թ.** Ա.Բախչյանը հանդիպեց UNICEF միջազգային կազմակերպության հետ:
- 13.01.2009թ.** Ա.Բախչյանը եւ Ա.Մարտիրոսյանը հանդիպեցին եւ զրուցեցին «Երեւոնի» քրեակատարողական հիմնարկում գտնվող Ա.Սուրբուշուրյանի եւ Գ. Մանուկյանի հետ:
- 14.01.2009թ.** Ա.Բախչյանը մասնակցեց Ամ Վերահսկիչ պալատի նիստին:
- 15.01.2009թ.** Ա.Բախչյանը մասնակցեց Ամ Վերահսկիչ պալատի նիստին:
- 15.01.2009թ.** Ա.Բախչյանը հանդիպեց Քանաբեռ-Ջեյրան համայնքի ղեկավար Ա.Քոթանջյանի հետ:
- 15.01.2009թ.** Ա.Բախչյանը հանդիպեց 33 առողջապահության նախարար Բ.Քուշնյանի հետ:
- 15.01.2009թ.** Ա.Բախչյանը հանդիպեց 33 կրթության եւ գիտության փոխնախարար Բագրատ Եսայանի հետ:
- 16.01.2009թ.** Ա.Բախչյանը մամուլի ասուլիս տվեց «Փակագիծ» ակումբում:
- 19.01.2009թ.** Ա.Բախչյանը հանդիպեց Դավիթաշեն թաղային համայնքի ղեկավար Գ.Ենոքյանի հետ:
- 23.01.2009թ.** Լ.Ավալերյանը մասնակցեց 33 վարչապետին առընթեր Բյուրոյական խորհրդի նիստին:
- 16.01.2009թ.** «Փակագիծ» եւ ARMINFO ակումբներում տեղի ունեցավ Ա.Բախչյանի մամուլի ասուլիսը:
- 26.01.2009թ.** Ա.Բախչյանի համընկած շնորհատանը դեսպանատան կազմակերպած միջոցառմանը:
- 27.01.2009թ.** Ա.Բախչյանը եւ Ա.Մարտիրոսյանը հանդիպեցին «Վարորդ-Ռուսիկան» 34 անդամներ Գեորգ Դոստոյանի եւ Տիգրան Հովհաննիսյանի հետ:
- 27.01.2009թ.** Ա.Բախչյանը եւ Ա.Մարտիրոսյանը մասնակցեցին Բրիտանական խորհրդի կազմակերպած՝ ՆԱՆԵ մրցանակաբաշխությանը:
- 28.01.2009թ.** Ա.Բախչյանը եւ Ա.Մարտիրոսյանը այցելեցին Եռաբլուր:
- 29.01.2009թ.** Ա.Բախչյանը մասնակցեց 33 կառավարության նիստին:
- 29.01.2009թ.** Ա.Բախչյանը հանդիպեց Ավան թաղային համայնքի ղեկավար Տարոն Մարգարյանի հետ:
- 29.01.2009թ.** Ա.Մարտիրոսյանը հանդիպեց «Բարեկամություն» 34-ի կողմից հանդես եկող Եվթոմե Արամյանի եւ Ռուբեն Գապարյանի հետ:
- 29.01.2009թ.** «Ուրբաթ» ակումբում տեղի ունեցավ Ա.Մարտիրոսյանի մամուլի ասուլիսը:
- 29.01.2009թ.** Ա.Մարտիրոսյանը հանդիպեց ԱՄՆ դեսպանատան քաղաքական ու տնտեսական բաժնի տնօրեն Սթիվեն Բենքսի հետ:
- 29.01.2009թ.** Լ.Ավալերյանը հարցազրույց տվեց Գյումրիի «Գյալ» հեռուստաընկերությանը:
- 31.01.2009թ.** Ա.Մարտիրոսյանը հարցազրույց տվեց «ԱՐ» հեռուստաընկերությանը:
- 30.01-01.02.2009թ.** Ա.Բախչյանը, Ա.Մարտիրոսյանը, Զ.Փոստանջյանը եւ Վ.Խաչատրյանը մասնակցեցին Ծաղկածորում կազմակերպված սեմինարին:

ԼՈՒՐԵՐ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՃՈՒԴԱՐՁ

«Ճառանգություն» կուսակցության հայտարարությունը «Բջի» գործարանի օտարման մասին

Մեր հասարակությունը վերջին տասնամյակների ընթացքում հարմարվել է այն մտքին, որ քաղաքական շարժառիթներով ընդդիմադիր պահվածք ունեցող գործիչների հանդեպ իշխանությունը ծավալում է քրեական, հարկային-տնտեսական հալածանքներ, որոնց արդյունքում վարչակազմին դիմադրածող հասարակական-քաղաքական գործիչները ենթարկվում են ապօրինի սեփականազրկման, շատ դեպքերում՝ նաեւ ազատազրկման:



«Ճառանգություն» կուսակցությունը բազմիցս մեզ էլ, որ արտասովոր այդ գործելակերպը դատարաններում հանգեցնում է անարարացիության մթնոլորտի գերխտացման: Հետևանքը լինում է այն, որ վարչակազմի և հասարակության միջև ընթանում է հյուժիջ հակամարտություն, որից ոչ մի իշխանություն դեռեւս հաղթանակով դուրս չի եկել: Ապօրինի և արատավոր այսպիսի քաղաքականության մի բացառիկ օրինակ է «Բջի» գործարանի սնանկացումը և հարկադիր աճուրդով նրա վաճառքը: Փաստորեն ընդդիմադիր վարքագիծ դրսեւորած հեռախոսի Սուքիասյանի ու նրա տնտեսական համակարգի հետ գործի որպէս «Օրենքի ընդդուրի կիրառում» կոչված մասկալը:

ՀՀ իշխանությունները՝ լավ գիտակցելով, որ քաղաքական հաշվեհարդարի այս նույնիսկ ակտի հետևում հարյուրավոր մարդկային ծակատարներ են, հազուրդ տվեցին կրեմլոնդոնային և քաղաքական ընդդիմախոսներին ոչնչացնելու մղումներին: Համանման աղաղակող քաղաքական մարդաորսի գործողությունները մեզ քայլ առ քայլ հեռացնում են հասարակական կոնսոլիդացման, հնարավոր երկխոսության հանգրվանից և տանում են առհասարակ ու քաղաքական բախումների ճանապարհով: Մեր խորին համոզմամբ՝ այս ամենը մերկայիս իրավիճակում անօրյալատրելի է պետականա-կործան ուղեգիծ է:

18 փետրվարի 2009թ.

Ուղերը հայ ժողովրդին՝ երկրաշարժի տարեկիցի կապակցությամբ

Ուղիղ քսան տարի է անցել հայությանը պատուհասած ողբեգական օրվանից: Անեղ երկրաշարժը՝ հիմնովին ավերելով Ապխազի, իր մեծությամբ համընթացությամբ երկրորդ քաղաքը համարվող Գյումրին են մի շարք այլ բնակավայրեր, բազմաազար մարդկային կյանքեր խլեց, անքիչ-անհասարակ ընտանիքներ հաշվված վայրկյանների ընթացքում կորցրել ասեն ինչ է մնացին մերկ ու անապաստան: Բազում երազներ մնացին անկատար, բազում հույսեր խորակվեցին:

1988-ի դժոխական դեկտեմբերյոցի անցել է երկու տասնամյա-

յակ, սակայն «Աղետի գոտի» հոգեցունց արտահայտությունը տակալին ծանր խարանի պես կախված է հայ ժողովրդի գլխին: Դա չիմարար ու արարչագործ մեր ազգի ամոթ է:

Ելնելով վերը նշվածից՝ կոչ ենք անում: Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ 2009 թվականը հայտարարել Աղետի գոտու հիմնադրամիջոցների խաբար վերացման տարի, բոլոր շահագրգիռ կառույցներին, քաղաքական ուժերին, հասարակական կազմակերպություններին, անհատներին, Սփյուռքի մեր բարեխարհներին, ուսանող երիտասարդությանը՝ ուժերի մերթադին չափով օժանդակել այդ ազգանքը նախածեռնության իրականացմանը:

7 դեկտեմբեր 2008թ.

«Ճառանգության» պատգամավորներն այցելեցին կալանավորներին

Այսօր Աժ «Ճառանգություն» խմբակցության ղեկավար Արմեն Մարտիրոսյանը և պատգամավոր Աննա Բախչալյանը հանդիպեցին Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում գտնվող կալանավորներ Արմեն Խուրշուդյանի և Գեորգ Մանուկյանի հետ: Վերջիններս 2008թ. դեկտեմբերի 23-ին մեկուսարանում իրենց նկատմամբ կիրառված բռնության փաստի կապակցությամբ կատարվող ծառայողական քննության վերաբերյալ հայտնեցին հետեւյալը: Արմեն Խուրշուդյանը հայտարարեց, որ տեղի է ունեցել բռնություն, սակայն չի բողոքում, իսկ Գեորգ Մանուկյանը հայտնեց իր դժգոհությունը ՁԼՄ-ների կողմից տարածվող տեղեկատվությունից, ըստ որի՝ նա հերքել է իր նկատմամբ տեղի ունեցած բռնության փաստը: Նա նշեց, որ իր համոզյալ ֆիզիկական բռնություն է տեղի ունեցել, բայց ինքը կապախ իր փաստաբանի վերաբերման և նրա հետ խորհուրդակցելուց հետո կպատասխանեմ ծառայողական քննության իրականացման մարմնի հարցերին: Գեորգ Մանուկյանը հայտնեց նաեւ, որ շարունակում է հացադուլը և ուժի առողջության հետ կապված խնդիրներ, մասնավորապես՝ շարունակական գլխացավ և աջ աչքի տեսողության խնդիր:

Մեկուսարան մտնող այցելության ժամանակ նույնպես արձանագրվել են բռնության և անմարդկային վերաբերման դեպքեր: Հետևանքաբար բողոքելուց հրաժարվելու նման դրսեւորումները վկայում են, որ կալանավորների հանդեպ ճնշումներն ու բռնություններն այլ ձեւերով շարունակվում են ցայսօր:

24 դեկտեմբերի 2008թ.

Իշխանությունը պարտավոր է ապահովել Փորձագետների փաստահավաք խմբում «Ճառանգության» և ՀԱԿ-ի ներկայացուցիչների անվտանգությունը

«Ճառանգություն» կուսակցությունը և Դա ազգային կոնգրեսը հանդես են եկել Փորձագետների փաստահավաք խմբի գործունեությանը վերաբերող հերթական համատեղ հայտարարությանը՝ իշխանությունների և գործող նախագահի պահանջելով ապահովել այդ խմբում ընդդիմադիր երկու միավորումների ներկայացուցիչների անվտանգությունը: Հայտարարության մեջ ամանակորակա նշվում է.

«Մոլորակի 20-ին մենք հրապարակել ենք Մարտի 1-ի խնդրով ստեղծված Փորձագետների փաստահավաք խմբի գոր-

ծունեության մասին համատեղ հայտարարությունը դատապարտելով անկախ այս մարմնի աշխատանքներին նախագահի աշխատակազմի միջամտությունը, մասնավորապես, հակառակ Փաստահավաքի կապուցումը որոշման նրա Ազգային ժողովի շենքում աշխատելու պարտադրանքը:

Պարզվեց, որ տեղի է եղել մեր մտախաղություններն այն այն, որ Աժ շենքում, ապահովված չեն վկաների ինքնուրույն քննադատման, վկաներին և փորձագետներին տարատեսակ ազդեցություններից գերծ պահելու պայմանները: Նախապես մեզ դիմած բազմաթիվ վկաներ, անվտանգություն ունենալով ոչ թե Փաստահավաք խմբի, այլ նրա աշխատակազմի նկատմամբ, հրաժարվում են տեղեկատվություն և վկայություն տրամադրելուց զգուշանալով բացահայտվելու ու հետապնդումների ենթարկվելու հեռանկարից:

Մենք շարունակում ենք պնդել մեկ ամիս առաջվա մեր հիմնավորված պահանջի վրա Փաստահավաք խմբին այլ չեզոք մի տեղում աշխատակազմ տրամադրելու մասին: Միաժամանակ մենք ներկայացնում ենք երկրորդ, արդեն հասունացած մի երկրորդ հրատապ խնդիր լուծելու պահանջ: Հայկի առեւտրով, որ Փորձագետների փաստահավաք խմբի անդամները գործունեության մեկ ամսվա ընթացքում կուտակվել է մեծաքանակ արժեքավոր տեղեկատվություն, որ եւակար է մարտիմեկ-նայ ոճրագործության բացահայտման համար, ինչպես նաեւ այն, որ մինչև օրս բացահայտված են պատասխանատվության կանչված չեն մարտի 1-ին անմիջակամորեն սպանվածները կատարած ու նրանց հրաման տված անմիջիկ ու պաշտոնյաները, անիրաժեշտություն է առաջացել ապահովելու Փորձագետների փաստահավաք խմբի անդամների անվտանգությունը: Հակառակ դեպքում Փաստահավաք խմբի անդամներից յուրաքանչյուրի հետ հնարավոր որեւէ միջադեպի ուղղակի պատասխանատվությունը կկրեն իշխանությունները և գործող նախագահն անձամբ»:

Հայ Ազգային կոնգրես «Ճառանգություն» կուսակցություն 13 հունվարի 2009թ.

«Ճառանգություն» խմբակցության հայտարարությունը քաղաքականության հանդեպ բռնության դեպքի կապակցությամբ

Անցած տարվա դեկտեմբերի 23-ին Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում կալանավորների նկատմամբ բռնության դեպքի հետ կապված «Ճառանգություն» խմբակցության պատգամավորների, Մարուտ Իրավունքների պաշտպանի ներկայացուցչի և Իրավապաշտպան տարբեր հասարակական կազմակերպությունների այցելությունները վկայում են բռնության աղաղակող փաստերի մասին: Այդ կապակցությամբ, ինչպես հայտնի է, ՀՀ արդարադատության նախարարը համենարարել էր անցկացված ծառայողական քննության, ինչը և ներկայումս իրականացվում է:

«Ճառանգություն» խմբակցությունը լրջորեն մտախոգված է կատարվող բռնությունների և նմանապիպ աճործնականությունների փաստով և ՀՀ գլխավոր դատախազի պահանջում է անհապաղ քրեական գործ հարուցել վերը նշված բռնության դեպքերի առնչությամբ:

16 հունվարի 2009թ.



Արմեն Մարտիրոսյանի օրենսդրական նախաձեռնությունը ուղղված տաքսիստների շահերի պաշտպանությանը

10 փետրվարի 2009թ., Աժ «Ճառանգություն» խմբակցության ղեկավար Արմեն Մարտիրոսյանը հանդես եկավ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենսդրական նոր նախաձեռնությանը: Կուսակցությունը և համանուն խորհրդարանական խմբակցությունը իրապես մտախոգված են երկրում օրավուր խորացող տնտեսական ճգնաժամի այլևս ակնհայտ բացասական դրսեւորումներով, որոնց լրացնելու է գալիս տաքսիստտրային փոխադրումներ իրականացնողների նկատմամբ ՀՀ իշխանությունների վրած ոչ ճիշտ քաղաքականությունը:

Նախագծի ընդունումը պայմանավորված է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումներ իրականացնող շուրջ 3000 աշխատատեղերի պահպանման հանրածեռնությանը և ձեւական վարչարարությանը, եկամտաստեղծ գործունեությունը չչահանման փակվելու հիմնարար սկզբունքի անբողջական իրականացմամբ: Օրինագծի ընդունումը եւակնորեն կնպաստի նշված գործունեություն իրականացնող անձանց և նրանց ընտանիքների սոցիալական ապահովման խնդիրների լուծմանը՝ ներկա ֆինանսական ճգնաժամի պայմաններում:

«Ճառանգություն» կուսակցության հայտարարությունը

«Ճառանգությունը» իշխանություններին պահանջում է՝ բացահայտել ք եւ պատժել լրագրողների նկատմամբ բռնությունների հեղինակներին

«Ճառանգություն» կուսակցությունը խստորեն դատապարտում է «Չեսաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության ղեկավար և «Չեսոք» ինտերնետային պարբերականի գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանի նկատմամբ նոյեմբերի 17-ի երեկոյան կատարված բռնարարը, որի հետևանքով իր անաշատությամբ և արհեստավարժ գործունեությամբ լայն հասարակության ու միջազգային լրագրողական կազմակերպությունների բարձր գնահատանքին արժանացած լրագրողը մարմնական վնասվածքներ էր ստացել: Սեղի ցնցում պատրոշմամբ տեղափոխվել է հիվանդանոց: Տեղի ունեցածը երկրում ամենաբողոքյալ և անպատժելի խոթ-

յան մթնոլորտի ուղղակի հետեւանքն է, որի պայմաններում քրեածին տարբեր «գործուն» էլ է ավելի լայն ու ճիհին:

Մենք վստահ ենք, որ եթե լրագրողների նկատմամբ նախկինում կատարված ոտնձգությունները համարժեք արձագանքի արժանանալիս պատկան մարմինների կողմից են ժամանակին բացահայտվելին դրանց կատարողներն ու պատվիրատուները և խստազույս պատժվելին, ապա տեղի չէր ունենա այս հերթական բռնությունը միջադեպը: Սա մենք որակում ենք իրրել ազատ խոսքի մշակներին և ողջ առաջադեմ հասարակությանը վայի մթնոլորտում պահելու ապարդյուն փորձ, որի ուղղակի պատասխանատուն նաեւ օրվա իշխանությունն է: Վերջինս կամ չի վերահսկում իրավիճակը, կամ շահագործված է նման հանցագործությունների շարունակականության մեջ:

«Ճառանգություն» կուսակցությունը վերստին պահանջում է անհապաղ և առջնահերթ բացահայտել տվյալ և նախորդած նմանօրինակ հանցագործությունների կատարողների ու կազմակերպիչների և մեղավորներին պատժել օրենքի ողջ խստությամբ: Լիախոյս ենք, որ գոնե այս անգամ իշխանությունները արագորեն կբացահայտեն նշված միջադեպի բոլոր հանգամանքները՝ այսպիսով գոնե մեկ անգամ գործու պայքացնելով,

որ հետամուտ են իրենց իսկ հոչակած՝ Հայաստանում ազատ խոսքի, բազմակարծության և քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքների մարցման խոչընդոտելու վերաբերյալ:

